

ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԵԱՆՑ ԴԷՄ

ԿՈՆՈՐԷԱՆ ՄԻՋՏ ՄԻԶԱՆՅՔԱՑԻՆ ՀԻՒԾՆԴՈՒԹԻՒՆ 2Ե

1. — Ձերմամիզութիւն բառը հաւանաբար ֆրանսերէն *chauade-pissez* բառացի թարգմանութիւնն է, որ կը գործածուի կոնորէախն, պլէնորաժիին, դըբէրէրին տեղու Բայց կոնորէան միշտ ջերմամիզութիւն, այսինքն միզուկի բորբոքում չէ:

2. — Կայ և աչքի կոնորէաւ Հիւանդը իր վարակուած մատները կը տանի աչքին ու մանրէները կը ներմուծէ այնուեղ եւս Կամ կոնորէայով վարակուած մայրը իր երախային ծնունդի օրը կը վարակէ երախային աչքերը, որոնք կ'ուռափն և կը թարախուախն: Այս եւս կոնորէաւ է, բայց ջերմամիզութիւն չէ և սեռային մերձնեցումի արդիւնք չէ:

3. — Չորս տարի առաջ դարմանեցի ինը տարեկան պատանի մը, որուն ամբողջ բերանն ու քիթը վարակուած էին կոնորէայի մանրէով: Բերանը կաս-կարմիր, լեզուն և շրթունքները ուռած, ոչ մէկ տաք հեղուկ կրնար խմել, և ցաւէն կը հեկեկար Մանրագիտակը ցոյց տուաւ, որ պատանին բերնի կոնորէայով կը տառապէր Բայց այս եւս ջերմամիզութիւն չէր:

4. — Յաճախ հանդիպած եմ մարդոց, որ սրբանի ու թափանի (ազդքին ամէնէն ստորին մասը) կոնորէաւ ունին Տղամարդոց մէջ այս վարակումին պատճառը անբնական սեռային յարաբերութիւնն է: Իսկ կանանց մէջ վարակումը կ'անցնի սեռային գործարաններէն: Կոնորէա ունեցող կինը հակամէտ է իր սրբանը վարակելու:

5. — Կոնորքը, այս հիւանդութեան մանրէն, այնքան ալ անմեղ չէ: Ոչ միայն կը վարակէ մարդկային մարմնի վերոյիշեալ բացուածքները, այլ և մուտք կը գործէ մարմնին խորքը և սոսկալի աւերներ կը գործէ, պատճառելով՝ ա) կիներու մէջ որովայնի բորբոքում, բ) յօդերու, յօդակապերու և մկաններու բորբոքում, գ) սաքերու մորթային հիւանդութիւն մը (hyperekératose), դ) սրտի բորբոքում, բացի այն անմիշական բարդութիւններէն, որոնք տեղի կ'ունենան սովորաբար կոնորէայի ընթացքին:

ԱՄՓՈՓՈՒՄ - ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

1. — Կոնորէայի մէջ միշտ կոնոքոքը կարելի է գանել ջերմամիզութեան մէջ՝ ոչ միշտ:

2. — Կոնորէան միշտ միզանցքային բորբոքում չէ, այլ կրնայ նաև աչքի, բերանի, քիթի, սիրախ, որովայնի, սրբանի, արգանդի, եւայլն բորբոքում ըլլալ

3. — Կոնորէան միշտ սեռային մերձեցումի արդիւնք չէ:

4. — Կոնորէան միշտ ջերմամիզութիւն չէ և ջերմամիզութիւնը միշտ կոնորէա չէ:

Բժ. ԵՐ. ԽԱԹԱՆԱՄԵԱՆ



ԼԵԹՆԱՅԻՆ ԿԼԻՄԱՆ

Ինչպէս ցոյց տուին ֆասթէօրի փորձերը, 1000 մեթը բարձրութեան վրայ փոշի գոյութիւն չունի: Օդը գրեթէ զուտ է եւ մաքուր ձիշտ է թէ ծովուն բացերն ալ օդը նոյնքան մաքուր է, սակայն լեռը այն առաւելութիւնը ունի, որ իր օդը աւելի չոր է, իովին դէմ պաշտպանուած տեղեր ունի, մթնոլորտային Ցնչումը նուազ է:

Լեռներուն գագաթը, ծիմնը կը համգչեցնէ փոշին, ամբողջութեամբ կը ցոլացնէ արեւին Յառագայթները, կ'արգիլէ օդին տաքութիւնը իետեւաբար ջրաշոգիին կազմութիւնը ջոր եւ սառն օդը աշխուժութիւն կուտայ մորթին: Զգայական ջիղերուն շնորհիւ, կ'ագդէ շնչառութեան անդրադարձիկ կեղրոնին վրայ, եւ այսպէսով կը նպաստէ առատ Թթուածին ստանալու:

Օդը լեռներուն վրայ անօսրանալով, Թթուածինն ալ կը նուազի իետզիթտէ: Այնպէս որ ծեր շնչառական մեցենան, անիրաժեշտ Թթուածինը քաշելու համար, կը ստիպուի աւելի աշխատիլ: Արինը եւս արագ շքան կ'ընէ: Միւս կողմէ կարգ մը կազմախօսական գործարաններ արեւան կարմիր նոր գնդիկներ կը պատրաստեն:

Կը տեսնուի թէ ի՞նչ առաւելութիւններ կը ներկայացնէ լեռնային կլիման, Ան յանձնարարելի է ընդհանրապէս անոնց, որոնց անարին են, իիւանդութենէ դեռ նոր եած են, տկարակազմ եւ ուժաթափի: Շուտով անոնց ախորժակը կը բացուի, ծանրութիւնը կ'աւելնայ, խորունկ եւ վերանորոգիչ քունը կուգայ, յոգնութիւնը կը մոռցուի:

Դարձեալ, լեռներուն վրայ անմիջապէս զգալի կ'ըլլայ դնդերային շարժումներու անիրաժեշտութիւնը, կարծես ընութիւնը կը մըդէ մարզանք կատարելու: Շուտով ներքին ջերմութիւնը կ'աւելնայ, ախորժակը կը բացուի եւ առիթ կուտայ լաւագոյն սննդառութեան,

Բժ. Ն. ԹԱԳԻՂԻՐԵԱՆ